Ա. ՏԱՐԻ, ԹԻՒ 42 — 23 ՅՈՒՆԻՍ 1900 ՇԱԲԱԹ, ՈՒՍՏՐ. — JUNE 23 VOL I No. 42

ԲԱԺՆԵԳԻՆ
Մ. ՆԱՀԱՆԳԱՑ ՀԱՄԱՐ
Տարեկան $1.50
Վեցամսեայ 0.85
ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՄԱՐ
Տարեկան 10 Ֆրանք
ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԵԼԻ
—o—
Խմբագրութեան ղրկուած նամակ կամ ծրար ետ չեն վերադարձուիր։
—
ԳԻՆ 3 ՍԷՆԹ։

ՀԱՅԿ
Հայրենեաց

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՀԱՅԿ
AMERICAN HAI PUBLISHING Co
P. O. Box 379, Worcester, Mass

Entered at the Post Office at Worcester, as Second - Class Mail Matter.

Subscription $1.50 a Year.

WIEN BFS 8. 9.10

ՀԱՅ ԱԶԳԱՊԱՀՊԱՆ ՄԱՐՄԻՆ

Հայութիւնը ոչ մէկ ատեն ազատութեան դաբնիաբարձ բագուկին ու կորուստի գահավիժին այնքան մօտ գացած էր որքան ներկայիս· ու ամէն վարկեան յառաջ կը մղուի դէպի մին և միւսը· ու ասոնք իրարմէ միայն մէկ քայլ հեռի են, այն բոպէին որ հայութիւնը պէտք էր փրկուէր, նոյն բոպէին կրնայ գահավիժիլ յաւիտենական խորտակումով...։

Հայութիւնը յուսոյ և վախի շրջութեայ մղումին առջև, փոթորիկէն խլուած իրի մը պէս, յառաջ կը քշուի, ո՞ւր արդեօք· ո՞ւր կանգ պիտի առնէ· ազատութեան լեռնաբերձ պատուանդանին վրայ ազա՞տ...թէ կորուստի գահավիժին տակ իւր աւերակներովը տարածուած յաւիտեան...՞։

Բա՞խդնէ արդեօք այն ուժը որ հայութիւնը կը մղէ— կո՞յր բախդը· անգո՞ւթ բախդը, սե՞ւ բախդը, այն բախդը որ այսքան դարերէ ի վեր ոչ մի օր մեզի ժպտեցաւ· այն բախդը որ մեր արիւնի գետերը խմելու, մեր նահատակց դիակները ուտելու, մեր արցունքի ծովերուն մէջ լոգանալու և մեր աւերակներուն վրայ թափառելու սովորէ, —թէ ազգային հարազատ գօրութիւն մը՝ օժտուած ազգային բարձրագոյն դաղափարներով, բարձրագոյն անձնազոհներով, բարձրագոյն ուժերով, կառաջնորդէ, կը մղէ կը տանի ազգը՝ խելքի, կամքի և հաւատարմութեան ճամբայէն դէպի հարազատ վաղճանը· ո՞վ է որ մեզ յառաջ կը մղէ· խե՞լքը թէ ցնորքը· կա՞մքը թէ մոլեգնութիւնը· ուժին կորո՞վը թէ տենդին դանդաղումը։ Կերթանք մինք· սակայն ո՞վ կամ ինչ բան մեզ կը տանի, ո՞ւր կերթանք...։

Յառաջ քան զամենայն, ամէն ազգասէր հայ իրականութիւնը ըմբռնելու, գիտնալու է թէ, չէ կարելի հայութիւնը եղած տեղին վրայ կեցուցնել· եթէ մենք կանգնինք, մեր դարաւոր թշնամին ղմեզ կը մղէ արդէն դէպի մին չեւ վերջին հայուն սպանդանոցը, մեր ազգային մահապարտութեան վճիռը տրուած՝ ու մեր իսկ արեան հեղեղներովը մեր աւերակներուն վրայ կնքուած է Կարմիր Սուլթաններու ձեռքերով· չեն ձգեր որ կանգնինք· թափառական հրէային ետեւէն կանչող սոսկալի ձայնը մեր ականջին ալ անընդհատ մահու շեշտերով կը գոչէ «Քալէ՛...»· տեղն ի տեղը չմեռցուելու համար պարտինք քալել, սակայն ապահով ընթանալու· բաղձալի վաղճանի մը հասնելու համար, հարկ անհրաժեշտ է որ ազգովին քալենք· ամենքս մէկ սիրտ, մէկ միտք, մէկ հոգի· ճամբանիս մէկ, ուժերնիս մէկ, վաղճաննիս մէկ։

Ազգային ի՞նչ ներշնչարան ունինք որ ամէնքս մէկանց ներշնչէ, մէկանց շարժէ։ Էջմիածին Ամենայն Հայոց Հայրապետութեան գահը· Զարեհու բռնակալութեան տակ իր ազատութիւնը կորուսած՝ եղածէ առածին ըսածին պէս, «Բերան կայ լեզու չկայ»։

Նոյն վիճակին մէջ կը գտնուի Թըրքահայոցս Պատրիարքութիւնը, և աւելի չարաբաստիկ վիճակի մէջ, ոտքէն մինչև գլուխը վերքերով լիէ և ամէն կողմէն շղթաներով կաշկանդուած, անկէ ի՞նչ ազգային ներշնչութիւն կրնայ յառաջ գալ· բացի Հայաստանի աղէկտուր ողբերուն խղդուած արձագանքէն, որ կանդրադառնայ Կ. Պոլսոյ Պատրիարքարանէն, Պատրիարքին լացերովը միախառնուած։ — «Ի՞նչ կրնամ ընել զաւակներս»... այս է ամենէն անձնուէր և ամենէն արի Պատրիարքին պատասխանը։

Մեր յեղափոխական կազմակերպութիւններն ալ ազգային ներշնչարան մը լինելու բարձրութեանը հասած չեն, ոչ ուրոյն ուրոյն՝ ո՛չ ալ հաւաքաբար,—հաւաքաբար իրարու միս կուտեն արդէն։

Ոչ Արմէնիան, ոչ Հնչակը, ոչ Դրօշակը կրցին ազգային ներշնչարան հանդիսանալ- Անոնց ձայնը միայն խիստ անձուկ շրջանակներու մէջ լսելի եղաւ սոսկ մասնաւորներու։ Վերակազմեալ Հնչակեանները նոր կեանք առին հայութեան սոսկումներուն պատճառներէն ցոլացած փորձառութիւններու լոյսին տակ երբ հայութիւնը կը կոտորուէր Հայաստանի ամէն կողմերէն մինչև Կ. Պոլիս ու երբ Եւրոպական պետութեանց դիւային վերաբերմունքը կը պատկերանար· այդ յուսոյ ժամադրավայրին վրայ յուսախաբութեանց սոսկումներուն տակ հիասթափում մը Հնչակեան գործիչներու մտքերուն մէջ պատճառէն արդիւնք ցոլանալու և արդիւնքէն պատճառ անդրադառնալու գործողութիւնը ստեղծեց, անոնք որ ճիշտ այդ օրերը ի ժողով գումարուած էին Լոնտոնի մէջ· փորձառութեան թարմ ներգործութեանց տակ· սրտերնուն վրայ կրած տաք վերքերովը քննեցին, քննադատեցին իրենց անցեալ գործունէութիւնը, ու ըստ այնմ գծեցին նոր ուղղութիւն, ըստացան նոր ոգի և վերակազմուեցան նոր հաւատքով։

Այսօր «Մարտ» և «Նոր-Կեանք», Ազգային շունչ, Ազգային դրօշմ, ազգային կեանք ունին և անոնց գծած գործունէութեան ուղղութիւնը եւ եղանակը ազգին սրտէն բղխելու պէս կողջունուի ազգէն, սակայն վերակազմեալ Հնչակեան կուսակցութիւնն ալ հասած չէ ազգային հզօր ներշնչարան մը ըլլալու դիրքին· գաղափարնէ դեռ՝ ոչ մարմնացումը, կերթայ- կամի, դէպի այն, լաւ ևս է ըսել, այդ մարմնոյն ճամբան պատրաստելու կարապետն է, անապատին մէջ կանչող ձայնը, հայութեան Մեսիային առջևէն քալող դեսպանը, այժմ կըպասսենք որ բանը մարմին ըլլայ; ԱԶԳԱՊԱՀՊԱՆ ՄԱՐՄԻՆԸ ի հանդէս գայ՝ օժտուած ազգային լիակողմանի ուժերով, ներշնչարան մը որ պարունակէ կատարեալ վստահութիւն, կատարեալ ձեռներեցութիւն, կատարեալ գործունէութիւն։

Այսպիսի մարմին մը կիրականանայ մի միայն ազատ մթնոլորտի մէջ, ազատ հողի վրայ, ինչպէս ըրաւ Մխիթար Աբբան Հայ Գրականութիւնը, Հայ Լեզուն, Հայ Պատմութիւնը պահպանելու պաշտելի նպատակաւ, ինչպէս կընեն մեր Օսմանլը հայրենակիցները իրենց ամենէն մեծ ներկայացուցիչներուն Եւրոպական հողի վրայ համախմբելովը։

Հնչակեան կուսակցութիւնը պէտք էհաւատարիմ ըլլայ իր այդ կոչումին, ազգին ամենէն հեղինակաւոր, ամենէն անբասիր ժողովրդականութիւն վայելող, ամենէն փորձ ու տաղանդաւոր անձնաւորութիւններէն ազգային ճշմարիտ ներկայացուցչական մարմին մը կազմելու· որը իր մէջ նոյնացնէ ազգին քաղաքական, մարտական և տնտեսական ուժերը։

Յարդ մեր ազգային ամէն կարգի գործունէութիւններէն ահռելի վիժումներ միայն ունեցեր ենք· ազգային ուժի բացակայութենէն։

Ո՞ր մարմինը կայ այժմ որոյ համար ապահովապէս կարելիէ ըսել թէ, կը ներկայացունէ ազգային ուժը· և առանց այդ ԱԶԳԱՑԻՆ ՈՒԺԻՆ, ի՞նչպէս կարելի է ազգը այս մահահոտ քառսնեռէն առաջնորդել, տանիլ ազատութեան կատարը։

Ո՞ւր են, ի՞նչ կընեն մեր ազգային տաղանդին, մեր ազգային ժողովրդականութեան և ազգային տնտեսական կարողութեան ներկայացուցիչները։ Ե՞րբ անոնք օրինակ պիտի առնեն Պետրոսեան պէյի որդիէն, Տամատ Մահմուտ փաշաէն և նմաններէն։ Ե՞րբ մեր այ ամենէն մեծ, ամենէն կարող անձնաւորութիւնները ինքզինքնին պիտի նետեն ազատ հողի վրայ և կազմեն ազգապահպան հզօր մարմինը, մարմին մը որ իրեն բազուկ ունենայ հայութիւնը և իր ձայնը ըլլայ հայրենեաց ձայն հեղինակաւոր։ Ահա այդ մարմինին կազմութիւնովն է որ կարող պիտի ըլլանք ապահովել մեր ազգային գոյութիւնը, անով է որ պիտի կարենանք առաջնորդուիլ այս փոթորկալից ովկիանոսէն դէպի ապահով նաւահանգիստը։

Երբ ունենանք հայ ազգապահպան մարմինը, այն ատեն կարող կըլլանք ծածկել մեզ շրջապատող բոլոր պարագաներն ու պատեհութիւններն և օգտուիլ անոնցմէ· այն ատեն կրնանք բանակցիլ, կրնանք համաձայնիլ, կրնանք դաշնակցիլ, թերևս, մեր Մահմէտական հայրենակիցներու ազատատենչ ներկայացուցիչներու հետ և գործակցիլ հասարակաց հողին վրայ, հասարակաց շահու գիտակցութիւնովը։ Ուրիշ շատ բաներ ընել կարող կըլլանք։

Յեղափոխական մարմինի մը գործը միայն «Զարդել բրդել» չէ, անոր տեսակետը նպատակի յաջողութիւնն է և այդ նպատակի իրականացումին պիտի ձգտի յօգուտ գործածելով ամէն միջոց, ամէն պայման, ամէն պատեհութիւն։ Մեր առաջադրած մարմինը պիտի ունենայ յեղափոխական տրամադրութիւն՝ բանին լայն իմաստովը· նեղ հայեացքէ դուրս պիտի գայ, իր բոլոր գործունէութիւնը չպիտի սահմանափակէ այլ ևս հայութիւնը կոտորել տալուն և անոր տեսակները ի վերայ աւերակաց բարդելուն մէջ։ Կար ատեն մը որ Սասունի լեռները հայ արեամբ ներկելէն և Պոլսոյ մէջ պօմպ նետելէն ամէն բան կը յուսայինք· այսօր կը տեսնենք թէ ատոնք բաւական չեղան ու բաւական չեն։ Ահա Չինաստան պատերազմ յայտարարած է ամբողջ քաղաքակիրթ աշխարհի դէմ, կը ջարդէ ոչ միայն տեղացի քրիստոնեաներ, այլ նոյն իսկ Եւրոպացիներ ու Ամերիկացիներ կսպաննէ, կը խողխողէ նոյն իսկ դեսպաններ, թնթանօթ կարձակէ միջազգային նաւատորմի և միջազգային գինուորներու վրայ, կըսպանէ զանոնք· Եւրոպական շահերը հարիւրաւոր միլիոններով ոտքին տակ առած կը կոխկրտէ· և սակայն Եւրոպական միջամտութիւնը տակաւին երևան չգար այնպէս, ինչպէս մենք կը յուսայինք Սասուն թափուած արիւնէն ու Պոլիս նետուած պօմպէն· պանգայի մը ցոյցէն։

Իրականութիւնները ըմբռնելու ընդունակ, անոնց համեմատ ազգային նըպատակը յառաջ վարելու ամէն միջոցներովը զօտեպնդած և ամէն զոհողութիւն ընելու կամեցող ու կարող ազգային մարմինի մը մէջ է որ կը տեսնենք յուսալու գործունէութիւնը։

Գ. Պ. ՋԻԹՃԵԱՆ

Յառաջիկայ կիրակի (Յունիս 24) է ՏՕՆ ԿԱԹՈՂԻԿԷ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ և 10 դ. տարեդարձ հիմնարկութեան Ուստրի Ս. Փրկիչ Եկեղեցւոյ, որ պիտի տօնուի հանդիսապէս։

Նախընթաց շաբաթ երեկոյին Յունիս 23) երեկոյեան ժամերգութիւնը եւ նախատօնակի հանդէսը պիտի սկսի ժամը 7 ին, իսկ առաւօտեան ժամերգութիւնը 9 ին և Ս. Պատարագը 10½ ին· Լորէնսի Նորընտիր Հոգևոր Հովիւ Արժ. Տ. Արսէն Վարդապետ Վեհունին հրաւիրեալ է Ս. Պատարագ մատուցանելու եւ քարոզելու։

Երեկոյեան Հ. Ե. Ը. Ընկերութիւնը իւր կազմակերպութեան առաջին հանդիսաւոր ժողովը պիտի ունենայ ժամը 6½ ին ընդ նախագահութեամբ Առաջնորդ Սրբազան Հօր· յաջորդաբար պիտի խօսին Սրբազան Հայրը, Տ. Արսէն և Տ. Ղևոնդ Վարդապետները, և անդամներէն ոմանք պիտի կարդան ճառեր· օրուան ատենախօսութեանց գլխաւոր նիւթը պիտի ըլլայ «Ինչո՞ւ Քրիստոնէական Եկեղեցին անուանուեցաւ Հայաստանեայց Ազգային Եկեղեցի։»

ԲԱՑ ՆԱՄԱԿ

Ամերիկայի Դաշնակցականներուն

Ազնիւ Հայրենակիցներ.

Ո՛չ երբէք մեծ հայրենասիրի մը յաւակնութեամբը, ա՛յլ պարզ ճշմարտասիրի մը ոգւովը կուգամ այս **ԲԱՑ ՆԱՄԱԿՈՎ** *ձեր առջեւ դնել Ազգին Ընդհ. բողոքը և պահանջը, որն որ ամենուսն ալ է...։*

Եղբա՛յրք, ջանանք գիտնալ թէ՝ մարդոց ու ազգերու առ միմեանս ունեցած պարտաւորութիւնները իրենց զարգացման աստիճանին համաձայն են... մենք հայերս ալ իբր ժողովուրդ և ազգ կամ անհատներ ուրիշ ազգերու շարքին մէջ, պարտաւոր ենք մեր զարգացման աստիճանին չափովը ցուցընել այն պարտականութիւնք, զորս ունինք մեր անձին, մեր ազգին, աշխարհին, ինչպէս նաև մեր կուսակցական անհատականութեան առջեւ...։

Ու մանաւանդ, քանի որ ուրիշներէ աւելի բազմաչարչար ու անիրաւուած ենք, մենք պարտինք ջանալ— գէթ մեր օգտի համար— աւելի նախանձախնդիր ըլլալու արդարութեան անեղծ պահպանմանը և անիրաւ դատապարտումի փճացմանը...։

Վերջին քառորդ դարու մէջ մեր ազգային յարափոփոխ վիճակը, ուրիշ շատ մը բաներէ աւելի աչքի զարնող մէկ երեւոյթ մը յառաջ կը բերէ, այդ երեւոյթն է մեր նկարագիրը. Այդ նկարագրի ուսումնասիրութեանը և զայն արժանավայել կերպով երեւան բերելուն նուիրուելու է ամէն հայ։

Տրէյֆիւզի խնդրոյն մէջ, իբր հայելիոյ, աշխարհ Ֆրանսական ազգին նը-կարացիրը կը կարդար,— Հայ Տրէյֆիւզ Արփիարի խնդրոյն մէջ ալ մեր ազգային նկարագրի ազատամտութիւնը. արդարակորովութիւնը ու վեհանձնութիւնը փայլեցուցնելու ժամն է որ կը հնչէ...։

Պիտի ուզե՞նք խոստովանիլ թէ դեռ անկազմակերպեալ ենք... թէ՝ դեռ ոչինչով կը տարբերինք այն բիրտ ուժի զանգուածէն, որուն նկարագրի արժանիքը ներկայ կացութեան ծնունդ տուաւ, պիտի հռչակե՞նք ուրեմն ու անպատկառ երեսով ու գործնականապէս ալ թէ մենք արժանաւորութիւն չունինք այն մեծագոյն կեանքին — ազատութեան, որուն սրանց բաղձացողներ հանդիսացանք ու հարիւրաւոր հազարներով զոհերու արեամբ այդ սուրբ ուխտին ու հաւատքին դրօշմը կնքեցինք աշխարհի սրտին վրայ... պիտի ուրանա՞նք ուրեմն մեր ազգային արժանիքը. եթէ առողջ մտքով ու դատողութեամբ վարանինք ու նոյն իսկ զլանանք ուղղել այն սխալները, որոնք մերն են, եղած և են...։

Իրաւունք ունինք յուսալու որ Ամերիկայի պէս միջավայրի մը մէջ ապրող հայք աւելի լաւագոյն միջոցներով, գերազանցապէս լաւագոյն կերպով պիտի ըմբռնէին իրենց պարտականութիւնը Ազգային կենսական խնդրոյ մէջ. ու մանաւանդ դուք պրն. Դաշնակցականք աւելի ազատամիտ ոգւով, ու առանց «խղճահարութեան» պարտաստ ըլլալու էիք արմատախիլ ընելու այն թունալից տունկը որուն աճումը վտանգաւոր է մեր ազգային ու անհատական կեանքին մէջ...։

Պատուոյ ատեանի խնդիրը որ այսօր ամէն ճշմարիտ հայու սրտին մէջ արձագանք կը գտնէ ինչո՞ւ ապօրէն ու անկարեւոր կը նկատուի ձեր կողմէն..։

Եղբայրք... Կուսակցական մը չեմ ես, ու չեմ ուզեր որ սխալ հասկացուիմ...։

Խնդիրը Պ. Արփիարեանը պաշտպանելու կամ Դրօշակեանները պարսաւելու մէջ չէ. այդ կէտը արդէն ամէն հասկացողի յայտնի է. առաջնոյն ատեան ուզելովը ու վերջնոյն խոյս տալովը։

Բայց կարեւոր կէտն այսէ թէ՝ Դրօշակեան կուսակցութիւնը իր պատուոյ ատեանի մերժումովը կը դատապարտէ ինքզինքը ու ասկէ զատ, ազգին մեացեալ մասը իրաւունք կունենայ հաւատալու թէ՝ Դրօշակեանք յիբաւի գործած են այն ամէն ոճիրները զորս իրենց կը վերագրուին, ու այն անիրաւ վճիռները այս ու այն կենսական խնդրոց մէջ, որոնք տրուած են Դաշնակցականաց կողմէն, այսօրուան խնդրոյն երեւոյթէն չափելով, այդ խնդրոց մէջ ի գործ դրուած արդարութեան և իրաւունքի չափը մեծ կասկածի տակ է...։

Դաշնակցութիւնը երբ կուրանայ ազգին պէտքը, երբ չ'ուզեր լսել ազգին արդար ձայնը... ուրեմն ազգային կուսակցութիւն մը չէ... ու ասիկա նորութիւն մ'ալ չէ... Դաշնակցութեան յախուռն գործերը մեծագոյն պատճառն են եղած այն ամէն աւելորդ ու անպետ սրածութեանց և կողոպուտին, որուն յառաջ բերած չարիքին որակը դեռ ևս կարելի եղած չէ չափել ներկայիս ու ապագային համար։

Հայ Դաշնակցական եղայրք Ամերիկայի. քաջ եղիք խոստովանելու. գործուած սխալները և նոյնպէս քաջ ուղղել ջանալու... ձեր կուսակցութեան խմբագրութիւնը մինչեւ ե՞րբ պիտի խաբէ զձեզ... մինչեւ ե՞րբ և ո՞ւչափ աւելի պիտի ստորնացնէ ձեր նկարագիրը. դուք ըսէք խնդրեմ— դիցուք թէ մեր այս Արփիարեան խնդիրը օտարներու առջեւ դրուած ըլլար, ի՞նչ պ'ասի խորհէին օտարները. երբ ձեր կուսակցութեան կողմէն անհատ մը՝ ու անով կուսակցութիւն մը ու ազգ մը կարհամարուի կը նախատուի, կը դրպարտուի, ու դեռ անոր դատախազք խոյս կուտան պատուոյ ատեանի մը առջեւ ներկայանալէ ու հաստատելէ իրենց ըսածները, եթէ դուք Հնչակեաններու տեղն ըլլայիք... այն ատեն ի՞նչ պիտի խորհէիք.. ու աւելին, եթէ դուք Ազգ ըլլայիք այն ատեն ինչպէ՞ս պիտի հանդուրժէիք...։

Եղբայրք, խնդիրը, զորն որ ունինք այսօր մեր առջեւ կարծուածէն շատ աւելի փափուկ է. Ազգին մէկ մեծ դատն կընէ որ կանուանարկէք...։

Դուք գիտէ՞ք մեր Ազգային պատմութիւնը ուրեմն ըսէք, ազգը քանի՞ տարին անգամ մը մեծ նկարագիր մը կը ծնի... ինչո՞ւ այնչափ դիւրին կը սեպուի ոմանց համար դաւաճանել Պրն. Ա. Արփիարեանի պէս մէկը... Յեղափոխութեան մէկ կարողագոյն անդամն է այն ու ազգին երկունքին ծնունդը... մեծ է այն քայլը որ ամբողջ Դաշնակցականութիւնը կառնէ ընդդէմ այդ ճշմարտապէս ազգասէր անձին... ու մեծագոյն մանաւանդ այն սճիրը, որ կը գործուի ազգին դէմ, անոր մէկ լաւագոյն զաւկին յանիրաւի դատապարտութեան...։

Սիրական Հայրենակիցք.

Յանուն արդարութեան եւ ազգին սուրբ շահուն ու սրբազան նկարագրին վերցնենք իբաց այն խոչնդոտները, որոնք արգելք կըլլան պատուոյ ատեանի կազմութեան և արդարութեան արեւուն ծագման...։

Շուտով ջանացէք պարտաւորել ձեր խմբագրութիւնը ընդունելու պատուոյ ատեանի կոչը. ասով կ'ազատիք այն մեծ դատապարտութենէն, որով ազգին մեծագոյն շահը պիտի դատապարտէ զձեզ և միւս նոյն ժամանակ ցոյց տուած պիտի ըլլաք առողջ մտքի ու դատողութեան նկարագիր մը...։

ԱՐՏԱՇԷՍ. Կ. ՔԷՕԼԷԵԱՆ

«ԴԴՈՒՄ ՄԸ ԿԱՐ ԵՐՈՒՍԱՂԷՄ»

Այս աշխարհիս խելքէ դուրս բաները հասկնալու համար, ալ խելքս կերաւ անգամ մ'ալ աշխարհ գալու եմ հասարակ մահկանացու։

Ժամանակին նորընծայ մը զինք ձեռնադրող Եպիսկոպոսին առջեւ աւետարան կարդալու պահուն կուգայ հոն որ գրուած է «Դո՞ւ միայն կաս Երուսաղէմ». ու փոխանակ ատոր կը կարդայ, «Դդո՛ւմ մը կար?՝ Երո՛ւսաղէմ?!՝». Եպիսկոպոսը դայս լսելուն պէս կը պոռայ «Քոռ ըլլաս դուն քու առջեւդ գրերը չես տեսնե. ինչպէս կըլլայ որ դդում մը կը տեսնես մինչեւ Երուսաղէմ»։

Ամէն անգամ որ լրագրութեանց մէջ կը հանդիպիմ կուսակցամոլի մը, որ ցընորած ոգիով ազատամտութեան խօսքեր կընէ, անբարոյականի մը, որ ստուերաթեանց աղմուկովը բարոյականութիւն կը ճառէ. իր անունը հրապարակ դնելու համարձակութիւնը չունեցող վատի մը, որ ասոր անոր վրայ ձրի գրպարտութիւններ կը նետէ յեղափոխականի հովեր առնելով. ապուշութիւն բուրող իմաստակի մը, որ իր խելքէն ու բարքէն վեր խնդիրներու մասին կը փիլիսոփայէ. պատուոյ ատեանէ սոսկացող ողորմելիներու, որ իրենց անունին հերոսութեան տիտղոսներ կը շարեն. անմիջապէս վերի ագէտ տէրպապան իր «Դդո՛ւմ մը կա՞ր!՝ Երո՛ւսաղէ՛մ!!՝»ի գոռում գոչումովը աչքիս առջեւ կը պատկերանայ, ու կսեմ եղկելինե՛ր դուք ձեր աչքին առջեւ կեցած փիղը տեսնելու կարող չէք, ինչո՞ր կը տեսէք դդում մը մինչեւ Երուսաղէմ...։

Եւ իրաւ, դդմենի մը կայ անշուշտ, դու ըսէ Երուսաղէմ, որ աշխարհիս չորս կողմը դդումներ թափէ — դեղդում գլուխներ, դդում սրտեր, դդում բարքեր, դդում խմբագիրներ, դդում թղթակիցներ, դդում յեղափոխականներ... ամէնքն ալ խելքէ դատարկ. խըղճէ դատարկ, դատարկ ամէն ազնուութենէ, ցաւալի ու պշդալի իրենց անտանելիութեան ամբողջ պարապութիւնովը—, ի՞նչ են դաս մը հրապարակագրութիւնով հրապարակի վրայ յարուցուած այս պղտոր և գարշելի հեղեղները, որ ընթերցողներէն շատերը քթերնին բռնած կը բացագանչեն ցաւագի՛ն «Ալ ձանձրացա՛նք...» մինչդեռ անդին կը գտնուին մաս մը ժողովուրդէն որ հաճոյքով մտիկ կընեն ընթերցուածը— «Դդո՛ւմ մը կա՞ր!! Երո՛ւսաղէմ!՝!!...։

Ե՛րբ պիտի դայ ժամանակը որ ժողովուրդը ամբողջ հասնի այն գիտակցութեան որ ալ չ'տանի այդ անիմաստ ձայնարկութիւններուն, ե՛րբ այդ նենգամիտ ապուշներուն երեսին ժողովուրդի ձայնը պիտի ըսէ, Ինկած են կուրութեան աստուածները, անցած գացած են մթութեան ամպերը, ծագած է գիտակցութեան պայծառ լոյսը, դո՞ւ միայն կաս երուսաղէմ. դու միայն կաս կոյր անդարմանելի, ով դուք՝ «Դդում մը կար Երուսաղէմ»

Այս քանի տողերը արդէն գրեր էի երբ ականջիս հասաւ ուրիշ դդումի մը մարմանիլը։ Ատոր ալ խելքս չի հասաւ։ «Բարկէն» մը «Խոհեմութիւն»ը տարեր որակեր է վանէն խլամացածներուն ?!? և յեղափոխութիւնը մարմնացուցեր է խումբ մը անխոհեմ զինակիրներու երեսէն Խաստուրէն կոտորուածներուն մէջ։

Կարդայ ու մի յիշեր տէր պապին «Դդում մը կար»ի ապուշ ընթերցուածը։

Ու կեզրակացունէ, թէ ինչ սոսկալի պիտի ըլլայ սպասելէն յառաջ գալիք հետեւանքը, կեզրակացունէ թէ օր մը ժամ մը սպասելու չէ?... Որո՛ւ սիրուն ըլլայ ըսեմ, չկ'այ մէկը որ այդ պարոնին ըսէ, «Հայտէ՛ մի սպասեր....» տեսնենք ինչ է որ պիտի ընէ, ալ ձանձրացանք այդ չսպասողներու պոռպռոցէն, եկէք քուէ տանք, եթէ մեր քուէին է որ կսպասեն. որոշենք որ ալ չըսպասեն, ինչ պիտի ընենք թող ընեն. նայինք, տեսնենք, մենք ալ ազատուինք իրենք ալ....»։

Հասարակ Մահկանացու

ԲԱՑ ՆԱՄԱԿ

«Շարժուն»մի խմբագրութեան

Յարգոյ պաշտօնակից!

Ձեր թերթին 238 դդ. թուոյն մէջ, գիտէք թէ, Փրովիտէնսէն «Հ. Հայկունի» ստորագրութեամբ իմ անձիս վրայ ինչ ամենածանր զրպարտութիւններ կայն։

Նախ ըսեմ թէ այդ անունը կեղծ է, Փրովիտէնսի մէջ այդ անուամբ մարդ եղած չէ ու չկայ։

Անշուշտ դուք իբրև հրապարակագիր՝ կը յարգէք լրագրութեան օրինական և բարոյական պահանջը. թէ, որևէ անձի մը հասցէին ամբաստանութիւններ պարունակող թղթակցութիւն մը հրատարակելու համար, ունենալուէ ամբաստանողին իսկական անունը։

Անշուշտ դուք գիտէք թէ ես ոչ Զարերու կայսրութեան մէջ Զար եմ, ոչ ալ Սուլթաններու երկրին մէջ Սուլթան մը. այլ ՊԱՐԶ ՄԱՐԴ ՄԸ ՀԱՑ ՄԸ ԵՄ ու այն ալ երկրագնդիս էն ազատ մասին վրայ, ուր կը գտնուի և ձեր թղթակիցը, հետևաբար, եթէ ձեր թղթակիցը վստահէ իր ըսածներուն ճշմարտութեանը, պարտի ամենայն համարձակութիւնով երևան գալ իր ճշմարիտ անունովը։

Անշուշտ դուք ինծի իրաւունք կուտաք ըսելու թէ, եթէ մէկը այսպիսի ազատ երկրի մը մէջ, ինծի պէս անձի մը վրայ այդպիսի ծանր անուանարկութիւններ կընէ կեղծ անունի տակ պահուած, մութի մէջէն գնդակ արձկող վատի մը պէս, վատէ և սաստիկ։

Անշուշտ դուք ալ տեսաք թէ, ձեր թղթակիցը յեղափոխականի, Դաշնակցականի հովեր ունէր, իմ Դաշնակցութեան վնասակար լինելուս փորի ցաւին վրայ դրած էր իր ձեռքը. ուստի յեղափոխական մը շատ աւելի բարոյական քաջութիւն ունենալու է իր տեսած զեղծումները և զեղծարարները ճաղկելու համար ասպարէզ ելլելու քաջաբար. «600 տոլ 3000 ֆրք. Ե. Եպիսկոպոսի անունով, հանգանակած և կոկորդս անցուցած եմ». Ամերիկայի հայոց հայրենասիրական զգացմանց պտուղը իր ազնիւ նը պատակէն կորզած և իմ որկորս նետած եմ։ Ահա ձեր թղթակցի զրպարտութիւններէն մին։ Արդ. ո՞չ ապաքէ նոյն իսկ բռնութեան հողին վրայ ատկէ նուազ ցած ու նուազ զզուելի գեղծումներու դէմ կը բողոքեն յեղափոխականները յայտ յանդիման, և բռնութեան ցասումին տակ կիյնան, կը շղթայուին, կը բանտարկուին, կախաղան կը բարձրանան, ինչո՞ւ ուրեմն երկրի մը մէջ՝ ուր օրէնք և արդարութիւն կը տիրէ՝ ձեր յեղափոխական?! թղթակիցը չը-համարձակի գիս ամբաստանել երես առ երես, այս ազատ երկրին մէջ, ուր իմ ոսոխներս պիտի ըլլան բոլոր անոնք որք վերոյիշեալ դրամը յանձնած են ինծի։

Գիտէք անշուշտ թէ, հոս Ամերիկայի մէջ նոյն ձեր կտաւի եղերքէն ուրիշ հայերէն թերթ մը կայ, նա ուղղակի տեղին մէջ գտնուելով, շատ աւելի ձեռն հաս է ձեր թղթակցին յարուցած խնդիրները քննելու և հարկ եղածը հրապարակելու. ինչո՞ւ արդեօք ձեր թղթակիցը իր ամբաստանութիւնները հոն չպարզեր, կամ ինչո՞ւ այդ թերթը ինք այդ խնդիրները ձեռք չառներ։ «Ինչ սոսկալի, ահռելի, զարհուրելի» մարդ մը ըլլալու եմ որ ոչ անհատ մը ոչ ալ մարմին մը կրնայ համարձակիլ իմ առջեւս կանգնելու և զիս ամբաստանելու, այսպիսի ազատ երկրի մը մէջ։ Այդ կաթ թափող կատուները ի՞նչ տեսակ երկիր տանինք ուր համարձակութիւն գտնեն մարդուն երեսը նայելու և անանկ ամբաստանելու։ Ի՞նչ կընեն Ամերիկայի մէջ ինծի հակառակորդ յեղափոխականները գէթ, ահա իրենց գործ, իրենց Զենս։

Ձեր թղթակցին վատութիւնով ըրած զրպարտութիւնները հերքելու նպատակը երբէք չունիմ։ Իր գրածներուն դոնէ մէկ նշանագրին ճշմարտութիւնը հաստատելու համար իրեն դիւրութիւն մը տամ։ Զէ՞ որ իր ըսածին նայելով ես ԽՈՇՈՐ թոչակով մը առաջնորդարանին քարտուղարութիւն կընեմ։ Անշուշտ քարտուղարի մը գործը գրելէ։ Առաջնորդարանի մը գործերը Մասոնական սոսկալի գաղտնիքներ չեն։ Անշուշտ այսքան ատեն ԽՈՇՈՐ թոչակ ստանալով առաջնորդի կամ առաջնորդարանի կողմանէ գէթ տող մը, առնուազն տառ մը գրած ըլլալու եմ, որևէ տեղ մը կամ անձի մը, թող ջանայ ձեռք ձգել և անով հաստատել, գոնէ գոնէ, ճըշմարտութեան այդքան շամանթաղմը։

Արդ, արդոյ պաշտօնակից, բարոյական և օրինական ամէն սկզբունքներու զօրութեամբ կուգամ պահանջել ձեզմէ որ յայտնէք իսկական անունը ձեր այդ թղթակցին, որ ծածկանունի թագստոցէն զիս բարոյապէս սպաննելու նպատակաւ նետած է այդ թիւնաւոր նետերը։

Եթէ ըսածները ճշմարիտ են. ոչ դուք վարանելու, ոչ ալ ձեր թղթակիցը վախնալու որևէ պատճառ ունիք, իսկ երբ հիմովին սուտ են, իմ մարդկային ու քաղաքացիական իրաւունքս յարգելու ազնուութիւնը կընէք։

Գ. Պ. ՉԻԹՃԵԱՆ

ԱԶԱՏԱՄՏՈՒԹԻՒՆ

Ինչպէս կրակը իւր զսպուած ջերմութեամբ հոս մայրն է ամէն բարեաց ո օրհնութեանց և հոն մահ ու աւեր կը գործէ անսանց հրկիզութեամբ. նոյնպէս երկդիմի ու զիրար հակասող դերեր ունի ԱԶԱՏԱՄՏՈՒԹԻՒՆԸ։

Մարդկային՝ ամէն յառաջդիմութեան մայրն է ազատամտութիւնը. իսկ երբ ազատամտութիւնը ուրիշներուն ազատութիւնը դատապարտելու ագէտ մոլեռանդութեան աստիճանին — լրբութեան կը հասնի, ահա այն ատենն է որ բարոյական հրկիզութեան ու աւերի անէծքը կը տարածուի։

Ո՛րքաններու ազատամտութեան սահմանն է. սահմանել, կաշկանդել, բռնաբարել ուրիշներուն ազատ մտածելու իրաւունքը, պահանջել անոնցմէ որ անշուշտ անոնք զգան, մտածեն ու գործեն ճիշտ այնպէս, ինչպէս իրենք կը զգան, կը մտածեն ու կը գործեն, եթէ ո՛չ, ազատամտութեան անունին մոլեգնութիւնովը կը բանադրեն, կը նզովեն, կը հալածեն, կը նախատեն զանոնք, իրենց նուիրական պարաք կը համարեն սպաննել զանոնք ի՛նչպէս որ կարելի է, ինչո՛վ որ կարելի է, ֆիզիքապէս, նիւթապէս, բարոյապէս. ու այս վարմունքին, փրփուր ի բերան, կը հռչակեն «Ազատամտութիւն»? որ բռնաւորութեան բռնաւորագոյն է. սրբապղծութիւնէ, հրէշային բռնութեան հրեշտակային դիմակաւորումն է. ազատամտութեան ճիշտ հակառակը, անոր ոխերիմը, ոսոխը, թշնամին, «Գայլ գառնազգեստ»։

Ճշմարիտ ազատամտութիւնը կը կայանայ ճիշտ դիմացինին ազատութիւնը՝ ազատ մտածումը, ազատ արտայայտութիւնը, ազատ վարմունքը յարգելուն մէջ միմիայն։ Դու քու ազատութիւնդ ուզելուդ, սիրելուդ, պահանջելուդ մէջ որև է առաքինութիւն չես ունենար, մուկն ալ կղձայ կատուին ձեռքէն ազատ մնայ. անձիդ զոհողութիւնովը դիմացինիդ ազատութիւնը պաշտպանելուդ մէջէն որ կը հասնիս մարդկային բարձրութեան, հոնէ որ ազատութիւնը իւր լուսոյ երանգներովը ճակտիդ ազատամտութեան լուսաճաճանչ պսակը կը հիւսէ։

Երբ Ճոհաննէսպուրկ Անգլիական բանակին անձնատուր եղաւ, երբ կառավարական շէնքին վրայ Բրիտանիոյ յաղթական դրօշակը հանդիսաւորապէս վեր կը բարձրանար, ժողովրդեան գլխիբաց խոնարհութիւններուն և ցնծագին ազաղակներուն առջև, հոն Պօէր զինուորը գլուխը գոց ու մտախոհ կեցած էր։ Մէկը մօտեցաւ անոր և յիշեցուց թէ, իւր գանս յաղթական դրօշակին՝ պարտի ինքն ալ իր գլուխը բանայ. զինուորը անուշադիր մնաց այդ առաջարկին, ատոր վրայ դիմացինը բարկացաւ, սկսեց նեղել և ստիպել զինուորը որ անշուշտ գլխարկը վար առնէ, հոն անգլիական ըսպա մը տեսաւ այս անցու դարձը, մօտեցաւ — ի՞նչ կը կարծէք ընելու —, կեցաւ Պօէր զինուորին նեղութիւն տուողին քով, պոռաց անոր վրայ լեցուն ցասումով մը և ըսաւ, «Ազատ ձգէ, հանգիստ թող այդ զինուորը, նա քաջի մը պէս կռուած է իր դրօշակին համար, բայց աշխարհի վրայ չկայ դրօշակ մը որուն համար կռուի քեզի նման վատ մը»։

Ահա այդ պերճախօս արարքին առջև էր որ տեսայ ազատ մարդը, ազատութեան ճշմարիտ զինուորը, իր ամբողջ հոգիովը, սրտովը, մտքովը, ամբողջ էութեամբը ազատութեան լուսացնցուղ ոգիովը թաթախուն։

Ահա ազատամտութեան մէկ տիպարը։

Ինչ կը խորհիք թէ նման դէպքի մը մէջ պիտի ընէր թիւրք սպայ մը։

Երևակայելը սոսկալի է, զզուելի է։

Ո՛վ դուք ազատամտութեան սիրահարներ, ձեր աչքին առջև պահեցէք յիշեալ դէպքը և անոր մէջ ազնիւ անգլիացիին օրինակը, պշգացէք թիւրքին բարքին համեմատ վարուելէ, յարգեցէք դիմացինին, ձեր հակառակորդին, ձեր թշնամին ազատութիւնը, թէև դուք կը բարձրացունէք ձեր յաղթական դրօշը. որքան յաղթող ըլլաք, ո՛րքան մեծ. այնքան աւելի պիտի յարգէք ուրիշին ազատութիւնը։

Անոնք են ուրիշին ազատութեանը վրայ բռնացողները՝ որոնք ստրուկ են. Անգլ. սպայի ըսածին պէս, չկայ դրօշակ մը որուն համար կռուելու, զոհուելու պատրաստ են, վատ են։

ԴԵՂԱՄ

ՊԱՆԴԽՏԻ ԳԱՐՈՒՆԸ

Ուրա՞խ է բնութիւն, թռչուններ երգով
Ծառից ծառ թռչում՝ զուարճանում են.
Ծաղկունք գոյն զգոյն անուշ բուրմունքով
Սգաւորներին ուրախացնում են։
Այլ իմ սիրտն ինչո՞ւ շարունակ թըմրած՝
Այս սրտագրաւ ճոխ տեսարանաց
Ուշադրութիւն իսկ տալ չի կամենում.
Ի՛նչ սէր, ի՞նչ վրէին է որ նկարէ
Բնութեան շնորհած սիրուն դրախտը,
Իսկ ես ինչո՞ւ միշտ զուրկ ամէն կարէ
Լալիս եմ այսպէս, անիծում բախդը։
Գարուն հասակումս ինչո՞ւ այսպէս շուտ
Տիրեց ինձ վիշտ, ցաւ և արիւնռուշտ
Բնութեան մարտը ծանրացաւ վրաս
Հալեց ու մաշեց ինձ արաց օրհաս։
Սոխակի երգն էլ կարծելէ տալիս
Ինձ հարց է անում, «Ո՞ւր է Հայրենիք.
Օտար աշխարհումս ի՞նչ ես ման գալիս.
Հայրենի երկրում թողեր ընտանիք։
Ադնիւ ամուսնիդ լալուց կուրցել է,
Գնա՛ ազատի՛ր, ի՞նչ ես մտածում.
Չէ՞ քեզ հետ մահ, կեանք նա խոստացել է,
Գնա՛, շուտ հասիր, քեզէ սպասում»։
Վարդի թփերից հեռացաւ սոխակ,
Իսկ ես դեռ տխուր պանդխտի սենեակ
Փակուած նայում եմ դէպի այն գետակ,
Որ է մշտայոյզ ընկերս միակ։
Այլ և դու գետակ տխուր ես քանզիս.
Մեղեդիդ այսօր բնաւ չ՚ազդեց յիս.
Թէ զուարթ ուռիք, զանազան ծաղկունք
Պարսամեն եզերքդ, և ի քեզ ձկունք
Խաղան ու կայտռեն, բայց դու սըգաւո՛ր,
Գոռաս անդադար վշտեր կարեւոր,
Լաս ու լացունես ինձպէս վիրաւոր
Հայրենիքից զուրկ անձանց բիւրաւոր։
Հայրենի երկրի վիշտ, սէրն ու կարօտ
Թաւամեցրեց ինձ ո՞հ, մահանում եմ
Երանի՛ թէ մահ շուտ հասնէր ինձ մօտ.
Բան այս վշտերը, որովք տանջվում եմ։

ՆՇԻԿ ԵՐԷՑ

Պրն. Եղիա Արսէնեան կը գրէ Նիւ Եորքէն։

Անցեալ շաբթուն մէջ Հայասանեայց եկեղեցւոյ հոգաբարձութիւնը մասնաւոր յայտարարութիւն ցրուած էր, ծանուցանելով թէ յառաջիկայ կիրակի Նորեկ Լորէնսի հովիւ Արժ. Տ. Արսէն Վարդապետ արտասահմանէն հոս գալով Պատարագ պիտի մատուցանէ, ու քարոզէ. այդ առթիւ բաւական բազմութիւն մը ներկայ էր եկեղեցին, Պատարագի աւարտումէն վերջ Արժ. Վարդապետը խօսեցաւ, բնաբան առնելով «Եթէ սիրէք զիս պահեսջիք զպատուիրանս իմ», բաւական լաւ բացատրութեամբ գոհացուց ժողովուրդը. կը յուսանք թէ պիտի կրնայ օգտակար լինիլ Լորէնսի հայ գաղթականութեան,

ՆԱՄԱԿ ՆԻՒ-ԵՕՐՔԷՆ

Երէկ կիրակի երեկոյ ժամը 8 ին տեղի ունեցաւ պատուոյ ատեանի համար կազմուած հրապարակային ժողովը։ Յանձնախմբին անդամներուն մէջ որ Դրօշակեաններ ալ կան եղեր, յայտարարութեան մէջ կը սպրդեցնեն երկու տող «Որմէ վերջ ժողովուրդն ևս պատեհութիւն պիտի ունենայ գիտակցաբար իր քուէն տալու» այս երկու պարզ տողերուն իմաստը ուշադրութեան չեն առած միւս ընկերները, որոնք միայն անկեղծութեամբ, հայ ազգը տառապեցնող ներկայ խնդրին լուծումը փափաքողներէն են և միայն այդ նպատակաւ ստանձնած են այդ պաշտօնը, առանց հաւատալու թէ պիտի գտնուին մարդեր որ ընդհանուր ազգին փափաքներուն հակառակող ըլլան։

Ժողովին ատենապետը բացակայ ըլլալով Տիար Տօքթօր Գաբրիէլեանը ընտրուեցաւ ժողովուրդի դրեթէ միաձայն հաւանութեամբը։ Տիար Տ. Գաբրիէլեանը որ միևնոյն ժամանակ յանձնախմբին կողմանէ հրաւիրուած էր պատուոյ ատեանի կարևորութիւնը բացատրելու, այնպէս դարձուածքներով նկարագրեց պատուոյ ատեանի կարևորութիւնը որ չեմ կարծեր թէ գտնուէր մէկը որ կարող ըլլար ատկէ լաւ բացատրել։ Ժողովի մէջ Դրօշակեան պարոնը որ յանձնախումբի անդամ էր, միևնոյն ժամանակ ուզեց ընդմիջել յիշելով յայտարարութեան միջի ծանօթ տողերը, բայց Տ. Գաբրիէլեան լռեցուց և ամէնէն վերջ ժողովրդին հարցուց թէ կուզե՞ն որ ուրիշ վիճաբանութիւն բացուի, ժողովուրդը միաձայնութեամբ «Ոչ» ըսաւ և ստիպուած տեղի տուին ժողովրդի ձայնին։

Ժողովի մէջ որոշուեցաւ գրել երկու կուսակցութիւններուն ալ պատուոյ ատեան մը կազմելու համար և երեք հոգիէ յանձնախումբ մը ընտրուեցաւ նամակ մը գրելու համար։ Ահա այսպէս Վառամեանները անդամ մընալ թող համոզուին թէ կեղծարարութիւնները հրապարակելով ժողովուրդին ներկայացնելէն աւելի լաւ կըլլայ քիչ մը իրականութեան մօտենան։

Մ. Հայագործեան

---

16 Յունիս 1900

Փրովիտէնս

Անցեալ շաբաթ իրիկուն ժամ 7,45 քաղաքիս Լեռնային դերասանական խումբը ներկայացուց «Սամուէլը», Նորէն ի նպաստ որբերու, ընկերութեանս սրբամաղրութեան սակ։

Այս անդամ շատ աւելի յաջողակ էր, որուն համար դերասանական խումբը ջանք խնայած չէր։ Ցիշելու արժանի է որ այս խմբի անհատներն գրեթէ բոլորն ալ գործաւոր են և ցերեկուան տաժանելի աշխատութենէ վերջ, իրենց իրի կուան հանգիստ զոհած են, Հայաստանի որբերուն օգուտ մը հասցնելու համար։ Ներկայացման մեծ փայլ մը տուաւ նաև հայ նուագածուաց խումբը, ամէն վարագուրի իմման ատենը գեղեցիկ կտորներ նուագելով։ Նուագածուաց խմբին նոյն իրիկուան ունեցած ծախուց համեմատ 20 տոլար տրուեցաւ սակայն 6 տոլար իբր նուէր որբախնամ ընկերութեան նորէն ետ դարձուցին։

Շնորհակալ ենք նաև Ուստրի Գրբադարանի վարչութենէն, որ հաճած էր իր ունեցած ներկայացման հանդերձներէն մաս մը ղրկել մեզի։

Կը յուսանք որ գալող աշուն նորէն պիտի սկսի դերասանական խումբերը նոր ներկայացումներով զուարճացնել հայեր և քաջալերել որբեր։

Ի դիմաց Փբրովի. Հայուհ. Որբախ. Ընկ. Գործ. Ժողովոյ։

Ֆիլատէլֆիա. 1900 Յունիս 12

Անցեալ շաբթու տեղւոյս Ընկերութիւնը իր տարեդարձի հանդէսը տուաւ մեծ շքով։ Հանդիսին ներկայ էին հայ և օտարազգի հոծ բազմութիւն մը երկսեռ։ Օրուան գլխաւոր ատենախօսներն էին Տիարք Ե. Սարգիսեան և Ա. Մ. Սիրականեան, առաջինը հայերէն խօսեցաւ. իսկ երկրորդը Անգլիերէն ընտիր ճառախօսութիւն մը ըրաւ, նիւթ ունենալով հայ ազգի ծագումը, գրականութիւնը և եկեղեցին։

Փօֆ. Պուլը, տեղական մեծ համբաւ վայելող Գերմանացի դաշնակահարը դաշնակ ածեց աննման ներդաշնակութեամբ և Օր. Աչվա Լինօրիա, հայասէր երգչուհին իր ձայնի յատուկ նրբութեամբ քանի մը ժողովրդական կտորներ երգեց և արժանացաւ բուռն ծափահարութեանց։ Մի այսպիսի յաջողութեան մեծապէս նպաստեց հայ մանուկները նաև իրենց լաւ սերտած արտասանութիւններով, փոքրիկ Մխալեան եւ Ֆէրէշէթեան մասնաւոր յիշատակութեան արժանի են։ Երանոս Աղբար կատակերգութիւնը յայտագրի վերջի մասը կը կազմէր և յաջողութեամբ կատարուեցաւ։ Հանդէսը ի նպաստ գրադարանի էր հասոյթը եղած է մօտաւորապէս $ 75

Ասկէ քանի մը օր առաջ հայ տիկիններ ալ, հանդէս մը տուած են, բայց դժբաղդաբար մի այնպիսի անյարմար օր ընտրած էին որ բացի մօտաւոր յարաբերականներէն ոչ ոք կարող եկած է ներկայ գտնուիլ, թէև տիկիններ կրկին $ 50 կրցած են ձեռք բերել, որ չենք գիտեր թէ ինչպէս կամ ինչ եղանակաւ իր նըպատակին պիտի գործածեն, անշուշտ մենք կը կարծենք որ հայրենիքի որբանոցները ամենէն շատ անմիջական նըպաստի պէտք ունին և հարկ է այդ դրամը փութով ուղարկել Պատրիարքարան։

Նոր շարժում մը սկսած է որբերու ի պաստ փառաւոր հանդէս մը տալ եւ եթէ աշխատող երիտասարդներուն ներկայ եռանդը այնպէս տաք մնայ տարակոյս չի կայ թէ կարևոր գումար մը պիտի գոյանայ։

Տեղւոյս հայերու թիւը հետզհետէ կը բազմանայ, հիմա մօտաւորապէս 50 ընտանիք կայ։

Այս շաբթու Բիպլիքիքն Բոնվինչը հոս պիտի գումարուի քաղաքը ամբողջ դրօշակներով զարդարուած է և կը կարծուի թէ 200,000 ժողովուրդ պիտի գայ դրսերէն։

***

ՖԱՂԱՔԱԿԱՆ

ԶԻՆԱՍՏԱՆ

Զինական կառավարութիւնը ճակատ առ ճակատ պատերազմի բռնուած է Եւրոպական պետութիւններու և ամերիկայի հետ։ Փէյ-Զօ գետին եզերքը թագուբերդէն Զինական զօրքերը ռմբակոծեցին միջազգային 30 մարտանաւերը. Անգլիական, Գերմանական, Ֆրանսական և Ռուսական նաւաստիներէն 50 ի չափ սպաննեցին ու վիրաւորեցին. ընկղմեցին երկու Անգլ. վաճառականական նաւեր։

Միջազգային մարտանաւերը Զինական մարտկոցներուն վրայ կրակ ընելով սպաննեցին 700 էն աւելի, և ամրոցները գրաւեցին։

Վերջին լուրերուն համեմատ Զինական զօրքերը սպաններ են Գերմանական և Ֆրանսական դեսպանները. արդէն ըսպաննած էին Ճաբոնական դեսպանատան Քոնսիլերը, և Փեքինի բոլոր օտարահպատակները կոտորած են։

Միացեալ Նահանգաց կառավարութիւնը հրամայեր է որ Մանիլէն 5000 զօրք ղրկուի Զինաստան։ Անգլիական կառավարութիւնը Լօրտ Բոպէրթսին ստիպողաբարպսպրեր է որ 10000 զօրք ղրկէ Հարաւ. Ափրիկէէն Զինաստան։

Ճաբոն 25,000 զօրք արդէն դէպի Զինաստան արշաւանքի վրայ դրեր է։

Միւս պետութիւնները նոյնը կընեն։ Ռուսիա այժմէն սկեր է 50,000,000 թաալ տուգանք պահանջել Զինաստանէն։

Միջազգային զօրքերը հասած են Փեքին մայրաքաղաքը։ Հեռագրական հաղորդակցութիւնները կտրուած են։ ըստոյգ լուրեր կը պակսին։

Դատեմի ուսումնասիրաց միութիւնը որ հաստատուած է 1897 ին կը լսենք թէ յառաջիկայ յուլիս 4 ին պատգամաւորական ընդհանուր ժողով պիտի գումարէ Պրայթընի մէջ։

ԲԱՆԱՍԷՐ

ՀԱՆԴԷՍ

Հնախօսական Պատմական
Լեզուաբանական և Քննական

Կը հրատարակուի տարեկան չորս գիրք (երէք ամիսը անգամ մը) Տնօրէնութեամբ Կ. Յ. Բասմաճեանի և աշխատակցութեամբ ազգային և օտար արեւելագիտաց։

Բացուած է՝ Բ դ. տարւոյ բաժանորդագրութիւնը։ Տարեկան 20 ֆրանգ (§ 4) վեցամսեայ 10 ֆր. (§ 2) մէկ գիրքը 6 ֆր. (§ 1,20)։ Դիմել՝ Բասմաճեան

112 Bd. Rechechouart Paris

Ամերիկայի գործակալն է՝ Պ. Յակոբ Գասապեան, որուն միջոցաւ ևս կրնան առանալ։ Հասցէն P. O. Box, 95 Station A, WORCESTER, MASS

ՀԱՒԱՔԱԾՈՅ

Հայ Ժողովրդական Երգերի
Ձայնագրեալ

Երաժշտասէր հայրենակիցներու մասնաւոր ուշադրութիւնը կը հրաւիրենք այս ըղձալի հրատարակութեան, որ կուգայ մեր ճաշակը նրբացնելու, մեր զգացումները ազնուացնելու, մեր բարքը ներդաշնակելու մէջ իր թանկագին դերը կատարելու. անոնք որ կուզեն Հայկական Ժողովրդական երգեր ածել նօթաով այս գործէն պիտի օգտուին ուստի նուագողներու համար մասնաւորապէս յանձնարարելի է և շատ նկատումներով ամէն հայու քաջալերանքին ու գնահատու արժանի։

Պիտի բաղկանայ 6 մեծադիր տետրակներէ։ Առաջինը արդէն լոյս տեսածէ։

Բաժանորդագրութեան պայմանները են։

6 Տետրակին համար		$ 6½
3 ,,	,,	$ 3½
1 ,,	,,	$ 1,25

DIRECTION des CHANTS ARMENIANS
5 Rue Chateaudun,
Paris, France.

ԻՐԱՒՈՒՆՔ

Լուրջ և իր անունին համեմատ խըզճամիտ լրագիր, կը պարունակէ քաղաքական գեղեցիկ տեսութիւններ և ազգային առատ լուրեր, կը հրատարակուի շաբաթը երկու անգամ։

Տարեկան բաժանորդագինն է 12 ֆրք.

Հասցէ.

REDACTION DE JOURNAL,
Iravounk, Varna, Bulgaria.

ՆԵՏԱ

Վէպ Պուլկարական յեղափոխական կեանքէն. կը պարունակէ խիստ սրտաշարժ պատկերներ և կը ցայտէ յեղափոխական ոգի արծարծելու կայծեր։

Գին 50 սանթիմ (10 սէնթ) դիմել Իրաւունքի խմբագրութեան վերի հասցէին։

ՆՈՐ ՔՆԱՐ ՀԱՅԿԱԿԱՆ
ԿԱՄ

Հաւաքածոյ հին և նոր Ազգ. Երգերու։

Մասն առաջին. գին 2 ֆրք.

Երկրորդ մասը մամլոյ տակ է։

Հասցէ։

A. ZARPHANELIAN,
Varna, Bulgaria.

ՊԱՏՈՒՀԱՆԻՆ ՄՈՒՐՀԱԿԸ

Թատերգութիւն եօթը արարուած— իրական կեանքէ առնուած և օրիճինլ գործ մի է, իւր ամբողջութեամբ խիստ հետաքրքրական ու շահեկան։

Ստանալ փափաքողք դիմելու առ Պ. Զարփանէլեան վերի հասցէով։

ԿՈՒԶՈՒԻ

Գիրք մը թարգմանելու համար Հայերէն և Արաբերենի հմուտ անձի մը հասցէն կը փնտռուի։

Դիմել

Մանուկ Շիրինեանի
10 Alden Street,
Worcester, Mass

ԱԶԴ

Կը ծանուցանենք Հայ հասարակութեան թէ՝ Պոսթոնի Թայլըր փողոցին մէջ նոր խանութ մը բացած ենք, ուր կը վաճառուին ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԸՆՏԻՐ ՆՊԱՐԵՂԷՆՆԵՐ ԶԱՓԱՒՈՐ ԳՆԵՐՈՎ։

Ցանձնարարութիւնք կը կատարուին փութով և խնամով։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍԱՄՈՒԷԼԵԱՆ
ԱՐԱՄ ԱՍՔԱՆԱԶ

Մեր հասցէն է
Tyler Grocery Co.
113 Tyler St. Boston Mass.

ՀԱՅ ԳՐԱՎԱՃԱՌԱԿԱՆ
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Պօլսոյ, Վենետիկի, Մ. Մամուրեանի և Տիկին Բաֆֆիիհետ մասնաւոր կարգադրութիւն ըրած՝ նաև ուրիշ գրատուներէ ալ գըրքեր բերել տալու միջոցները ձեռք բերած ըլլալով կուգամ գրասէր հայրենակիցներու ծանուցանել թէ իրենց փափաքած գըրքերը սովորական գնով կարճ ժամանակի մը մէջ՝ բերել տալու պատրաստ եմ. քիչ ժամանակ վերջը մեր քով արդէն պահեստի պիտի ունենանք ամէն ժողովրդական գրեանց շարք մը։

Փափաքողաց գրացուցակ կը ղրկենք։

Մեծ քանակութեամբ գընողներու՝ մասնաւոր զեղչ կընենք։

Դիմել Խ. ՊԵՏԻՇԵԱՆ
390 P O BOX
LOWELL MASS

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՕՇԱՐԱԿ

Ցիշեցէք հիւրասիրութեան արեւելեան սովորութիւնը։ Այցելուներու մատուցանելու ամենաընտիր և զովացուցիչ ըմպելին է ԱՐԵՒԵԼԵԱՆ ՕՇԱՐԱԿԸ. որ իր համին, հոտին և գոյնին կողմանէ կը գերաեանցէ բոլոր սոյն տեսակ ըմպելիները գաւաթ մը պաղ ջուրի մէջ, դգալ մը Օշարակ կը բաւէ. մէկ քօրթը կաւժէ 40 սէնթ իսկ մեծ քանակութեամբ գնողներուն 100 ին 15 զեղչ կընենք։ Օտար քաղաքներէ եղած ապսպրանքները փութով կը կատարուին. տեղափոխութեան ծախքը գնողաց վրայ է։

Դիմել Նպարավաճառ Վ. Յ. Բարակեանի 45 Էքսչէնճ սթրիթ Ուսթր Մէս։

45 EXCHANGE STREET,
Worcester, Mass.

ԲԱԶՄԱՎԷՊ

Հանդիսարան Ամբագիր

Ազգային, Գրական, Գիտական, Լեզուաբանական ու Հնախօսական գիտելեաց այդ Հայկական ճոխ Մառանը եւ Շտեմարանը ինքնօգնութեամբ զարգանալ ուզողներուն գրադարակը կրնանք կոչել։

Հասցէնէ.

REDACTION DE LA REVUE,
Pazmaveb,
St. Lazar Venis, Italie.

"ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՑ,,
ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ

Իր Գրական ու գիտական յօդուածներէն զատ հոն կը գտնենք Հայ Գրականութեան, լեզուաբանութեան, պատմութեան և հնախօսութեան վերաբերեալ ընտիր ուսումնասիրութիւններ. և ազգային լրագրաց և պարբերական հրատարակութեանց մէջ երևցած կարևոր գրութիւններու վրայ քննադատական տեսութիւններ։

Նիւթերու բազմազանութեամբը եւ և ուսումնասիրութեան լիակողմանի հմտութեամբը, կրնանք զայն կոչել ինքնագարգացման տենչացողներու ստընտուն։

Տարեկան բաժնեգինն է՝ 10 ֆրանգ. (2 Տօլար) Դիմել՝ հետևեալ հասցէին։

A la Redection de La Revue
"Hantess," Vienne (Autriche)
VI½ Mechitharistengasse 4.

ՇԱՒԻՂ

Հանդէս կիսամսեայ

Գրական Գիտական և Ազգային։ Նոր սկսուածէ հրատարակուիլ և խոստմնալիէ

Հասցէ.

DR. H. S. PAPAZIAN,
Varna, Bulgaria.



THOMAJANIAN BROTHERS,
52 Southbridge St.,
Worcester, Mass.

Ամերիկայի հայ գաղթականութեան կուգամք յայտարարել, ամէն դիւրութիւն կընծայենք նաւերու տոմսակ տալու մասին. դէպի Թուրքիա կամ Եւրոպայ. մասնաւորապէս կը յանձնարարեմք (Ֆրէնչ Լայն) կոչուած դիծն որ ամենապատուական և ամենաարագ նաւերը ունի և ամէն Հինգշաբթի առաւօտեան ժամը 10 ին ճամբայ կելնեն Նիւ-Եորքէն։ Նաև դրամ կը փոխադրենք Մարսէյլ հեռագրաւ թէ նամակաւ. Նոյնպէս Եւրոպոյ բոլոր գլխաւոր քաղաքները, որք կը գանձուին առանց որ և է ծախուց և դժուարութեանց մեր տան ապահովութեան մասին հայրենակիցք արդէն տեղեակ են անցեալ 10 տարուան մեր ընթացքէն։ Նաև կենաց, Վիրաւորուելու ամենամեծ լաւ ընկերութեանց գործակալութիւնը ըստանցնած եմք. ասոր համար այ օտարներու դիմելէ առաջ մեզի դիմեցէք. նամակներու պատասխանները մեր անմիջական ուշադրութեանը կուտամք ինչպէս սովորութիւնէ։

ՋԳԵՍՏԱՎԱՃԱՌ, ԵՂԲԱՐՔ ԹՈՎՄԱՃԱՆԵԱՆ
52 Սաուսթհ Պրիճ. Փողոց Ուստր Մէս

3 տոլարի Ապրանք գնողաց ալլուսանկարը մեծցնել կուտամք ձրի.

ՐԱՖՖԻԻ

«ԴԱԻԻԹ-ԲԷԿ» Ա. Բ. Գ հատոր վերջաբանով և «ԿԱՑԾԵՐ» Բ. հատոր լիակատար։

Իւրաքանչիւրի բաժանորդագինն է 5 Շիլին։

Լոյս կ'տեսնեն ներկայ 1900 թիւ ընթացքում և անմիջապէս կուղարկուին բաժանորդներին որպէս «ՍԱՄՈՒԷԼԸ» եղաւ։

Բաֆֆիի միւս երկերը ունենալ ցանկացողները պիտի ուղղակի դիմեն մեզ։

Մեզնից կարելի է ստանալ նաև Խրիմեան Հայրիկի, Ծերենցի, Պետրոս Դուրեանի և ուրիշ նշանաւոր գրուածքներ։

Հասցէ.

MME. RAFFI,
47 Uxbridge Road,
London, W., England.

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՆՈՑ ՁԵՌԲԷ ԾԱԽԵԼՈՒ ԵՒ ԱՃՈՒՐԴԻ (ՕՔՇԸՆ)
ԿԱՐԱՊԵՏԵԱՆ ԵՒ ՍՐԱՊԵԱՆ

151 Մէյն Ըսթրիթ Ուստր Մէս

Մենք կը գնենք և կը ծախենք տնական ամէն կարգի կահք և գոյք (Ֆրնիչուր) նոր կամ հին։

Մենք ամէն միջոց ունինք մեր մասնաւանդ մեր հայ յաճախորդները գոհացուցնելու թէ ապրանքին լաւութիւնով և թէ գնոյն ժանութիւնով։

Դիւրութեան համար ապառիկի դիւրութիւն ալ հաստատեր ենք. մէկ չորրորդը կանխիկ մնացեալը ամսավճարով։

Ամէն երկուշաբթի առաւօտ ժամը 10½ էն և շաբաթ կէս օրին ժամը 2 էն ետք աճուրդ (օքշընն) ունինք։

Դրսի քաղաքներու ապսպրանքները շուտով ու ճշտութեամբ կը կատարենք։

ԱԶԴ
ԸՆՏԻՐ ՊՈՒԼՂՈՒՐ

Ուստրի մէջ երկար տարիներէ ի վեր հաստատած ենք մեր յատուկ պուլղուրի գործարանը։ Այն գործին մէջ մեծ փորձառութիւն ունենալով, ամենալաւ ցորենէ կը պատրաստենք ընտիր պուլղուր, որ իր մաքրութեամբ և ուրիշ լաւ յատկութիւններովն՝ տանտիկիններու և ճաշարանապետներու գնահատութեան արժանացած է։ Կը պատրաստենք նաև նոյնպէս ընտիր ծեծած և կորկոտ։

Ուստի ամեն ով որ կուզէ ընտիր և ախորժահամ կերակուր լինելու պուլղուր և ծեծած ունենալ, թող դիմէ ուղղակի մեզ։ Ապսպրանքներ փութով կը կատարուին. մանրամասն տեղեկութեանց համար պէտք է դիմել հետեալ հասցէին.

Ուստրր, Պուլղուրի Միացեալ Ընկ.
151 Իւնիրն սթ., Ուսթրը Մասս.

Տաճկական տեսակ տեսակ ապրանքներ ալ կը ծախենք։

Ա. ՆԱՀԻՏ

Հանդէս Աղգային, Գրական և Գեղարուեստական. բացուած է Բ դ. տարուայ Բաժանորդագրութիւնը։

Հասցէ

ԱՐՇԱԿ ՋՕՊԱՆԵԱՆ
6 Place de L'odeon Paris

ՆՊԱՐԱՎԱՃԱՌ
ՄԵԾԱՔԱՆԱԿ ԵՒ ՓՈՔՐԱՔԱՆԱԿ
Ս. ՏԱՄՊՈՒՐԱՃԵԱՆ

Նիւ-Եորք 509 2դ. Ավինիւ

Տեղական և Արեւելեան բազմատեսակ նպարեղեններ, լաւագոյն տեսակ ընդեղեններ, եղանակին համեմատ բանջարեղեններ և առօրեայ թարմ միս։ Հայկական պանիր փաւունտը 12 սէնթ, մեծաքանակ գնողաց 10 սէնթ. Ուստրի պատուական Պղլուր և Ծեծած փաւունտը 4 սէնթի։

Զիթապտուղ (զէյթուն) փաւունտը 10 ս. մեծաքանակ գնողաց մասնաւոր զեղչ կընեմ, 5 փաւունտի քէն սալսայ հատը 25 սէնթ մեծաքանակ գնողաց 20 սէնթ հատը։ Մեր քով միշտ պատրաստ կայ Հայկական ամէն տեսակ ապրանքներ, ա՝ղը դրուած եափրաղ, ընտիր կորկոտ, անթապ հալվասի, կանանչ զէյթուն. Զէյթուն եաղի (ընտիր տեսակէն) մաքառնի լօքում տեսակներովը, ոսպ աղցուած կամ չաղցուած, սումախ, սիսեռ Պօլսոյ խաշար պանիր, լէպլէպի շաքարի տեսակներով, քիմիօն, անասոն, պատուական խունկ. աղուոր ալիւրէ հաց 2 հատը 5 սէնթ, եւայլն...։ Նամակով ետ՝ դած յանձնարարութիւնք փութով և քիչ վարձքով կը կատարենք մեր յատուկ կառքով։ Վճարումները կանխիկ են և ոչ ապառիկ։

Նաև կը ծախեմ Գամիեա, Խայսերիի Պաստրմա և Ծուճուղ։

ԿԱՐԻՈՐ ԱԶԴ

Ճաշակի յարմար պատուական ապուխտ (Խայսէրի Պաստրմայ) կը պատրաստեմ, գինն է՝ փաւունտը 35 սէնթ. վաճառման կեդրոնատեղին՝

Տ. ՍԷՄԷՐՃԵԱՆ
113 TYLER st BOSTON MASS